ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՐԿՈՒ ՊԱՐԱԴԻԳՄՆԵՐ՝ «ՍԵՎՐԻ ՍԻՆԴՐՈՄ» ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ՈՒԽՏ». ԽՈՍՈՒՅԹԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հոդվածում դիտարկվում են Սևրի պայմանագրի՝ թուրքական քաղաքական մտածողության, հասարակական հավաքական հիշողության վրա թողած ազդեցությունն ու դրա արդի դրսևորումները ժամանակակից Թուրքիայի քաղաքական-հասարակական խոսույթում, ինչպես նաև դրա ազդեցությունը արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության վրա: Այսօր Թուրքիայում կրկին պաշտոնական, քաղաքական խոսույթի մաս է դարձել «Սևրի սինդրոմը», ինչն ակտիվորեն դրսևորվում է իշխանական հռետորաբանության մեջ: Սրան զուգահեռ՝ Թուրքիայի իշխանությունները որդեգրել են չափազանց ագրեսիվ ու ռևիզիոնիստական քաղաքականություն հարևան տարածաշրջաններում՝ հիմնված ուժի կիրառման ու դրա շարունակական սպառնալիքի վրա: Իշխանությունները հռետորաբանության մեջ համադրում են մի կողմից Թուրքիայի տարածքային մասնատման վախը, սինդրոմը, մյուս կողմից՝ որպես դրա հակաքայլ՝ երկրի հարևանությամբ ագրեսիվ, ծավալապաշտական քաղաքականությունը, որը դրսևորվում է ոչ միայն խոսույթային մակարդակում, այլ նաև ռազմաքաղաքական կոնկրետ գործողություններով: Այսինքն՝ Թուրքիայի ներկայիս ագրեսիվ տարածաշրջանային քաղաքականությունը պայմանավորված է նաև տարածքային մասնատման վախով: «Սևրի սինդրոմը» և դավադրությունների տեսությունները ներազդել են թուրքական քաղաքականության վրա անցյալում, ինչը շարունակվում է նաև ներկայումս, քանի որ դրանք ժխտում են իրականության ըմբռնումը, ազդում քաղաքականության ու միջազգային գործընթացների գոյաբանական ընկալման վրա[1]:

Գիտական գրականության մեջ հայտնի «Սևրի սինդրոմ» եզրույթը բնորոշում է ներթուրքական հավաքական այն մտածողությունն ու ընկալումները, որոնց հիմքում ընկած է Թուրքիայի՝ շարունակաբար տարածքային մասնատման վտանգի տակ գտնվելու վախը: Գիտական ու վերլուծական գրականության մեջ շրջանառվում են նաև «Թանզիմաթի

[1] Տե՛ս **Michelangelo Guida**, The Sèvres Syndrome and "*Komplo*" Theories in the Islamist and Secular Press, Turkish Studies, Vol. 9, Issue 1, 2008, էջ 50:

սինդրոմ», «Բալկանյան սինդրոմ» եզրույթները, որոնք, սակայն, հավաքական առումով կարող ենք ամբողջացնել «Սևրի սինդրոմ» հասկացության մեջ: Ուսումնասիրելով Թուրքիայում «Սևրի սինդրոմի» դրսևորումները՝ կարող ենք արձանագրել, որ այն ոչ միայն թուրքական հավաքական հասարակական գիտակցության, այլև քաղաքական մշակույթի, աշխարհաքաղաքական մտածողության ու անվտանգային ինքնության մաս է (security identity)[2], որը ձևավորում է արտաքին աշխարհի, թուրքականից դուրս օտարի, թշնամիների նկատմամբ ընկալումները, ինչպես նաև արտաքին քաղաքական խոսույթի ու գործընթացների մաս կազմում: Թեև տարածքային մասնատման վախն ու տագնապը հանրապետության հռչակումից հետո մշտապես ուղեկցել են Թուրքիայի ռազմաբյուրոկրատական ընտրանուն և քաղաքական ուժերին, որոնք եղել են Օսմանյան կայսրության փլուզման ականատեսն ու վկան, և իրենց հիշողության մեջ առկա է եղել դրա առարկայացումը, այդուհանդերձ, տարբեր ժամանակներում հենց կառավարող շրջանակների ու զինվորականության միջոցով մշտապես վառ է պահվել «Սևրի ուրվականը» կամ «մի նոր Սևրի սպառնալիքը», որի վկայությունը թուրքական տարածված ասացվածքն է. «Թուրքիան երեք կողմերից շրջապատված է ծովերով, իսկ չորս կողմերից՝ թշնամիներով»: Մուստաֆա Քեմալի կողմից Սևրի պայմանագրին տրված՝ «թուրքերի դեմ ծրագրված մահափորձ» բնորոշումն ու դրա վրա կառուցված շարունակական մղձավանջը հետապնդել են հասարակական-քաղաքական շրջանակներին հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում: Տարածքային մասնատման վախը Թուրքիայում վերածվել է «համաթուրքական պարանոյայի»՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ ներգործության միջոցով: Օբյեկտիվ այն պատճառով, որ Թուրքիայի Հանրապետությունը հռչակվեց օսմանյան փլատակների վրա ազգայնամոլական շարժման միջոցով, և թուրքական հանրապետության հիմնադիր այրերը կայսրության կործանման ժամանակի վկաներն էին: Այդ հիշողությունը վերածվեց ռազմավարական մտածողության, որը շարունակ ուղեկցում էր ռազմական ու քաղաքական էլիտային: Սուբյեկտիվ ներգործությունն արդեն ավելի ուշ ռազմական ու բյուրոկրատական վերնախավի, քաղաքական տարբեր դերակատարների կողմից հասարակությանը շարունակաբար պարտադրվող, սնուցվող վախն ու

[2] Եզրույթը շրջանառության մեջ է դրել գերմանացի հետազոտող Լ. Գյոթշելը, ըստ որի՝ անվտանգային ինքնությունը երկար ժամանակ պետության բնակչության և քաղաքական էլիտայի կողմից յուրացված անցյալի վարքագծի, ընկալումների ու միֆերի արդյունքն է: Անվտանգային ինքնությունը կարող է վերաձևման ենթարկվել՝ կախված արտաքին միջավայրի նկատմամբ երկրի տեղի ու դերի վերագնահատումից: Անվտանգային քաղաքականության ընտրությունը պայմանավորված է նաև անվտանգային ինքնությամբ: Տե՛ս **Laurent Goetschel**, The Foreign and Security Policy Interests of Small States in Today's Europe, Small States inside and outside the European Union: Interests and Policies, ed. L. Goetschel, Springer-Science+Business Media 1998, էջ 13-33:

անցյալի հնարավոր կրկնությունը հիշեցնելն էր, որի նպատակը վերնախավի կողմից արտաքին մշտական վտանգի ու սպառնալիքի միջոցով հանրային մոբիլիզացիա ու հնազանդություն ապահովելն էր և քաղաքական գործընթացներն ուղղորդելը: Հարկ է համառոտ անդրադառնալ «Սևրի սինդրոմը» սնուցող տարրերին[3], որոնք բաժանվել են 2 առանձին խմբի՝ արտաքին և ներքին:

Արտաքին

-Արևմուտք և արևմտյան դավադրություն:

-Հարևան պետություններ՝ Հունաստան, Սիրիա, Հայաստան:

-Հայկական հարց և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթաց:

Ներքին

-Քրդական խնդիր:

-Էթնիկ-կրոնական փոքրամասնություններ:

-Ներքին թշնամի:

Տարբեր ժամանակաշրջաններում և իրավիճակային զարգացումներով պայմանավորված՝ սինդրոմի համատեքստում առանցքային է դառնում դրա որևէ բաղադրիչ կամ բաղադրիչների համախումբը: Հիմնական խոսույթում գերակայություն է ստանում որևէ բաղադրիչ, սակայն մյուս բաղադրիչները ևս կենսունակություն են ստանում, քանի որ դրանք շատ դեպքերում փոխկապակցված են, կամ մեկը պայմանավորում է մյուսին:

«Սևրի սինդրոմը» ներհատուկ է թուրքական քաղաքական-գաղափարախոսական տարբեր հատվածներին՝ ձախերից մինչև աջեր, աշխարհիկներից մինչև պահպանողականներ, քեմալականներից մինչև իսլամամետներ[4]: Տարբեր ժամանակահատվածներում սինդրոմն առարկայացել ու սրվել է տարբեր դերակատարների կողմից: Սկզբնական շրջանում դրանք ռազմական ու իշխող քաղաքական էլիտան, քեմալականության խնամակալության դրոշի ներքո գործող սուբյեկտներն էին, այնուհետև՝ քաղաքական թատերաբեմում ակտիվացած իսլամամետ-պահպանողականները, կրկին քեմալական ռազմաբյուրոկրատական ապարատը, իսկ այժմ արդեն՝ իշխող իսլամամետ-պահպանողական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (այսուհետ՝ ԱԶԿ):

Բավական հետաքրքիր են այս առումով սինդրոմի էրդողանական

---

[3] Բաշար Շիրինը ժամանակակից Թուրքիայի քաղաքականության համատեքստում որպես «Սևրի սինդրոմի» տարրեր առանձնացնում է Արևմուտքը, քաղաքական իսլամը, քրդերին, հարևան պետություններին և կրոնական փոքրամասնություններին: Հեղինակի մոտեցումն ընդհանրական է, ուստի մենք առանձնացրել ենք ներքին ու արտաքին բաղադրիչների մեջ այլ տարրեր ևս: Տե՛ս **Başar Şirin**, A Kemalist Perception of Threat: Sevres Syndrome in Contemporary Turkish Politics. Kemalism as a Fixed Variable in the Republic of Turkey: History, Society, Politics, Lutz Berger, Tamer Duzyol (Eds.), Bibliotheca Academica - Reihe Orientalistik (Book 31), Ergon Verlag 2020, էջ 75-97:

[4] Տե՛ս **Michelangelo Guida**, նշվ. աշխ., էջ 37-52:

մատուցումն ու արմատավորումը: Գալով իշխանության՝ ԱԶԿ-ն որդեգրեց ազատական-ժողովրդավարական քաղաքական կուրս և քայլեր կատարեց քեմալական կարծրատիպերից, տարբեր տաբուներից ազատվելու ուղղությամբ՝ փորձելով արտաքին քաղաքականությունն ու մտածողությունը բեռնաթափել, այսպես ասած, «անցյալի կապանքներից», որը վերաբերում էր նաև «Սևրի սինդրոմին»: ԱԶԿ-ն՝ որպես չափավոր իսլամամետ ուժ, հրաժարվեց այդ հռետորաբանությունից՝ ընտրելով ավելի պրագմատիկ արտաքին քաղաքականություն, մասնավորապես ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ հարաբերություններում: Նրա քաղաքականությունը առաջին երկու կառավարությունների ժամանակ[5] պրագմատիկ էր, թվում էր՝ բացարձակապես ազդված չէ «Սևրի սինդրոմից»[6]: Այլ խոսքով՝ իրականացվում էր ապաանվտանգայնացման քաղաքականություն, իսկ այդ համատեքստում «Սևրի սինդրոմը» դիտարկվում էր որպես Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը մշտապես ռազմականացման ու անվտանգայնացման ենթարկած հավատամք, որը ժառանգություն էր մնացել քեմալական ռազմաբյուրոկրատական համակարգից: Սակայն կարճ ժամանակ անց ԱԶԿ-ն և դրա առաջնորդ Էրդողանը դարձան ոչ միայն երկրի ներքին ու արտաքին քաղաքականության նորովի անվտանգայնացման (securitization) ճարտարապետներ, այլև ավելի սուր հարթություն տեղափոխեցին «Սևրի սինդրոմը»՝ շարունակաբար օրակարգում հասունացնելով Թուրքիայի՝ հերթական «ազգային-ազատագրական» պատերազմ մղելու, երկրորդ Սևրի պարտադրանքի առջև կանգնելու և թուրքական պետությունը արտաքին դավադրությունից փրկելու օրհասական տեսլականը: 2018 թ. Ստամբուլի Բիլգի համալսարանի իրականացրած սոցիոլոգիական հետազոտությունների համաձայն՝ հարցվածների շուրջ 87 տոկոսը նշել էր, որ եվրոպական պետությունները ցանկանում են մասնատել Թուրքիան, իսկ ավելի քան 73 տոկոսը Թուրքիային առաջադրված ԵՄ բարեփոխումները նմանեցրել էին Սևրի պայմանագրի պահանջներին[7]: Այս միտումները սկսեցին ակտիվորեն դրսևորվել և սրվել հատկապես 2013 թ. Գեզիի դեպքերի, քրդական հիմնախնդրի խաղաղ կարգավորման կամ «քրդական նախաձեռնության» ձախողման, 2016 թ. հուլիսյան ռազմական հեղաշրջման փորձի, ԵՄ-ի ու ԱՄՆ-ի հետ սրված ու բարդ հարաբերությունների ու հակաարևմտյան տրամադրությունների խորապատկերին: Պրոֆեսոր Մեսութ Հաքքը Ջաշընը 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձը դիտարկում է «Սևրի սինդրոմի» դիրքերից՝ նշելով, որ դրա հաջողության

---

[5] 2002 թ. ընտրությունների արդյունքներով ձևավորվեց ԱԶԿ-ական միակուսակցական 58-րդ կառավարությունը: 2003-2007 և 2007-2011 թթ. գործել են ԱԶԿ-ական 59-րդ և 60-րդ կառավարությունները:

[6] Տե՛ս **Michelangelo Guida**, նշվ. աշխ., էջ 47:

[7] Տե՛ս Kutuplaşma araştırması: Sevr Sendromu yükselişte // https://www.dw.com/tr/kutupla%C5%9Fma-ara%C5%9Ft%C4%B1rmas%C4%B1-sevr-sendromu-y%C3%BCkseli%C5%9Fte/a-42461638

դեպքում Թուրքիան կանգնելու էր մի նոր Սևրի դեմ հանդիման՝ արդյունքում մասնատվելով[8]: Թուրքիայի քեմալական հետազոտությունների կենտրոնի (ADD) տնօրեն Թանսել Չոլաշանը դեռ 2011 թ. թուրքական հանրությանը կոչ էր անում պատրաստվել «երկրորդ ազատագրական պատերազմին»՝ երկիրը վերահաս վտանգից՝ տարածքային մասնատումից, փրկելու համար: Զուգահեռներ անցկացնելով պատմական անցյալի հետ՝ ներկա գործընթացները նա նմանեցրել էր Օսմանյան կայսրության անկման ժամանակաշրջանին՝ ահազանգելով թուրքական պետության մասնատման ու տրոհման վտանգի մասին: Ըստ նրա՝ Թուրքիան կանգնած է Հայկական հարցի ու քրդական խնդրի առջև, և թուրքական պետությունը գնում է դեպի տարածքային մասնատում, ուստի պետք է սկսել «նոր ազատագրական պատերազմ»[9]: Սա դեռևս 1987 թ. «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման կապակցությամբ Թուրքիայի նախագահ Քենան Էվրենի հայտարարության շարունակական արտացոլումն էր, ըստ որի՝ «...մի որոշ ժամանակ անց ասելու են՝ ժամանակին արևելյան շրջաններում Հայաստան է եղել, այդ տարածքները վերադարձրեք հայերին»[10]:

Թուրքական պետության տարածքային մասնատման մասին քննարկումներն ունեն երկու կողմ՝ ներքին և արտաքին: Առաջինը վերաբերում է ներքին պայմաններից բխող, ճգնաժամային զարգացումներով պայմանավորված այնպիսի իրադարձություններին, ինչպիսիք են քրդական հիմնախնդիրը, աշխարհիկ-իսլամ հակադրությունը, ինքնության ճգնաժամը: Երկրորդ կողմն առնչվում է արտաքին ուժերին, որոնց քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, եթե չի համընկնում թուրքական շահերին, ընկալվում է որպես դավադրություն պետության նկատմամբ: Նման ընկալումները կրում են ինչպես քրդական խնդրի և քրդական պետության հնարավոր ստեղծման, այնպես էլ Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ազդեցությունը: Կարող ենք ասել, որ մասնատման ախտանիշը կամ սևրաֆոբիան ունի հիմնականում քրդական ու հայկական ուղղվածություն: Թեև այդ երևույթը շատ դեպքերում առաջին հերթին աղերսվում է այս խնդիրներին, սակայն այն ունի ավելի խորքային բնույթ, ինչը կապվում է արտաքին դերակատարների քաղաքականության հետ:

Թուրք մեկնաբան և հրապարակախոս Բ. Յինանչի խոսքերով՝ Թուրքիայում սերունդները մեծացել են այն բարդույթներով, որ

---

[8] Տե՛ս ÖÜ Öğretim Üyesi Prof. Dr. Caşın: Darbeciler başarılı olsaydı, bize Sevr sendromu yaşatacaklardı, https://www.aa.com.tr/tr/15-temmuz-darbe-girisimi/ou-ogretim-uyesi-prof-dr-casin-darbeciler-basarili-olsaydi-bize-sevr-sendromu-yasatacaklardi/626723:

[9] Çölaşan'dan 'savaşa hazırlanın' çağrısı, http://www.haber7.com/haber/20110404/Colasandan-savasa-hazirlanin-cagrisi.php

[10] **Լևոն Հովսեփյան**, Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական խոսույթում, Եր., 2012, էջ 18:

արևմտյան տերությունները երբեք չեն հրաժարվել Թուրքիան քրդական, հունական ու հայկական տարածքների բաժանելու գաղափարից, և այդ ընկալումն առկա է և՛ քաղաքական, և՛ հասարակական մակարդակներում[11]: Իսկ լրագրող Մ. Աքյոլը նշում էր, որ յուրաքանչյուր թուրք ապրում է Սևրի՝ որպես ազգային վախի ստվերի տակ, քնում և արթնանում այդ վախով[12]: Ինչպես նկատում է դանիացի արևելագետ Դ. Յունգը, չնայած Լոզանի պայմանագրի ստորագրմանը և թուրքական հանրապետության ինքնիշխանության ճանաչմանը, այնուամենայնիվ Սևրի փորձառությունը չմոռացվեց քեմալական էլիտայի կողմից: Թուրքիայի Հանրապետության հիմնադիր առասպելաբանությունն ու ժամանակակից քաղաքական մշակույթն արդյունք են ներքին ու արտաքին թշնամիների դեմ անընդհատ պայքարի, դավադիր տեսությունների, որոնք դարձան հանրապետական էլիտայի սոցիալական հաբիթուսի բաղկացուցիչ մասը[13]: Թուրք հրապարակախոսներից մեկի բնորոշմամբ՝ Սևրից տասնամյակներ անց էլ պահպանվում է դրա նշանակությունը Թուրքիայի նկատմամբ Արևմուտքի տեսլականում[14]:

Մ. Յեշիլթաշը նկատում է, որ պաշտպանողական աշխարհաքաղաքականության առանցքային բաղադրիչը հետկայսերական տարածքային կորստի ու լքվածության վախն է, որը մեծ տեղ ունի թուրքական պաշտպանողական աշխարհաքաղաքական խոսույթում: Սա կարևոր հանգամանք է երբեք չիրագործված Սևրի պայմանագրի՝ որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության պարադիգմում սոցիալ-քաղաքական մեկնակետի և աշխարհաքաղաքական տեսլականի շարունակականությունը հասկանալու համար: Ժամանակի ընթացքում Սևրով պայմանավորված տարածքային անհանգստությունները վերաճեցին աշխարհաքաղաքական անհանգստության, որն առնչվում էր ազգային ինքնությանն ու տարածքային ամբողջականությանը: Սառը պատերազմից հետո զինվորականությունը և քեմալական բյուրոկրատական համակարգը «տարածքային անապահովության» ընկալումը կրողներն էին[15]: Պաշտպանողական աշխարհաքաղաքական խոսույթն ու մտածողությունը բխում էին այն աշխարհայացքից ու ռազմավարությունից, որ Թուրքիայի Հանրապետությունն ստեղծվել էր Օսմանյան կայսրության փլատակների վրա, ուստի տարածքային մասնատման վախը («Սևրի սինդրոմ») մշտապես ուղեկցում էր ռազմաքաղաքական վերնախավին՝ թույլ չտալ, որպեսզի թուրքական պետությունը հայտնվի ճգնաժա-

---

[11] Տե՛ս **Barçın Yinanç**, Obama's choice as envoy to Ankara: Is Ricciardone a friend of Turkey? «Hurriyet Daily News», 18.08.2010:

[12] Տե՛ս **Mustafa Akyol**, Türk ırkçılarının inandığı yalanlar-2, «Star», 28.09.2009:

[13] Տե՛ս **Dietrich Jung**, The Sèvres Syndrome, http://americandiplomacy.web.unc.edu/2003/08/the-sevres-syndrome/

[14] Տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 17:

[15] Տե՛ս **Murat Yeşiltaş**, The Transformation of the Geopolitical Vision in Turkish Foreign Policy, Turkish Studies, Vol. 14, Issue 4, 2013, p. 667

մային իրավիճակներում, և միատարր ազգային պետություն կայացնելու ու արդիականացնելու ճանապարհը չխաթարվի: Թուրքիայում Օսմանյան կայսրության մասնատման ու կործանման դառը հիշողությունն ու փորձառությունը բավական թարմ էին և անջնջելի հետք էին թողել վերնախավի ռազմավարական մտածողության վրա: Ավանդաբար հանրապետական Թուրքիայի ռազմաբյուրոկրատական համակարգի արտաքին ու անվտանգային քաղաքականության ընկալումները արմատավորված էին առավելապես չեզոքության ու տարածաշրջանային խնդիրներին չմիջամտելու կաղապարի մեջ, ինչն էլ Թուրքիայի արտաքին քաղաքականության ու պահպանողական ռազմավարական մշակույթի կամ մտածողության կարևոր բաղկացուցիչներից էր: Այս առումով Թուրքիան բնորոշվում էր որպես «ստատուս քվոյի պետություն»[16]:

Ի տարբերություն նախկին ժամանակաշրջաններում իշխող էլիտաների կողմից սնուցվող սինդրոմի, որն ուներ առավելապես կանխիչ, նախազգուշացնող կամ ավելի ճիշտ՝ պաշտպանողական բնույթ կամ տրամաբանություն՝ սինդրոմի էրդողանական մատուցումն ունի ծավալապաշտական կամ հարձակողական տրամաբանություն, ըստ որի՝ տարածքային մասնատման վախը կամ տագնապը փոխակերպվում է ագրեսիվ, հարձակողական գործողությունների արդարացման: 2017 թ. խոսելով ազատագրական նոր պատերազմի մեջ լինելու մասին՝ Էրդողանը նշել է, որ «ձախողման դեպքում Թուրքիայի առջև բացելու են 100 տարի առաջ չհաջողված Սևրի ճանապարհը»[17]: Նման խոսույթը չափազանց ակտիվ է արդի իշխանական ԶԼՄ-ներում, պաշտոնական հայտարարություններում ու վերլուծական քննարկումներում: 2019 թ. դեկտեմբերին Արևելյան միջերկրածովյան շրջանում տիրող լարվածության մասին խոսելիս Էրդողանը շեշտում է Թուրքիայի ագրեսիվ գործողություններն ու ձեռնարկած քայլերը՝ նշելով, որ Թուրքիայի շահերը հաշվի չառնող պարտադրվող պլաններ կային արտաքին ուժերի կողմից: «Այստեղ պարտադրվող պլաններ կան: Ճիշտ քայլով մենք դրանք առ ոչինչ դարձրինք: Ավելի առաջ գնամ: Այնպիսի քայլեր արեցինք, որ Սևրին հակադարձեցինք, Սևրի հակառակն արեցինք»[18]: 2020 թ. օգոստոսին խոսելով Արևելյան Միջերկրականում լարվածության մասին՝ Էրդողանը հայտարարեց, որ Արևելյան Միջերկրականից մինչև Լիբիա Թուրքիայի կողմից մղվող պայքարը սոսկ իրավունքների համար պայքար չէ, այլև ազատագրական պայքար, և «ինչպես մեկ դար առաջ պատռելով գցեցինք Սևրը, հիմա էլ Արևելյան

---

[16] Տե՛ս **Ian Lesser**, The Evolution of Turkish National Security Strategy, Turkey's Engagement with Modernity, Conflict and Change in the Twentieth Century, ed. C. Kerslake, K. Oktem, P. Robins, London: Palgrave Macmillan, 2010, էջ 260:

[17] Erdoğan: "Kaybedersek Sevr tezgahı önümüze getirilecek", http://www.hakimiyetgazetesi.com/haber/erdogan-kaybedersek-sevr-tezgahi-onumuze-getirilecek-haberi-12275.html

[18] Cumhurbaşkanı Erdoğan: Burada Sevr'in aslında ters yüz edilmesi var, https://www.cnnturk.com/turkiye/cumhurbaskani-erdogandan-libya-anlasmasina-iliskin-aciklama

Միջերկրականում պարտադրվող Սևրի առջև չենք ընկրկելու»[19]: Թուրքիայի ռազմածովային ուժերի պաշտոնաթող գեներալ Ջ. Գյուրդենիզը, մեկնաբանելով Արևելյան Միջերկրականում ստեղծված իրավիճակը և ակնարկելով Արևմուտքին, նշում է, որ Թուրքիայի դեմ են դուրս եկել մի նոր «Սևրի քարտեզով», որի նպատակը երկիրն Անատոլիայում պարփակելն է, սակայն 2000-ականների սկզբներից (ԱԶԿ կառավարման շրջանից-Լ. Հ.) Թուրքիան մարտահրավեր է նետում, դիմադրում այդ պարտադրվող քարտեզին, իսկ հակառակ պարագայում այն կկանգնի «երկրորդ Սևրին դեմ հանդիման»: Ինչպես Էրդողանը, նա ևս Թուրքիայի ագրեսիվ գործողությունները դիտարկում է «Ազգային ուխտի» սահմաններում «Երկնագույն հայրենիքի»[20] պաշտպանության տրամաբանությամբ[21]: Պատահական չէ, որ պաշտոնական ու իշխանական մամուլում, «Սևրի սինդրոմի» դրսևորումների ակտիվացմանը զուգահեռ, Էրդողանը քաղաքական խոսույթում ակտիվորեն սկսեց շրջանառել Լոզանի պայմանագիրը վերանայելու անհրաժեշտության, «Ազգային ուխտի»[22] սահմանների հարցերը: 2016 թ. հոկտեմբերին Թուրքիայի քաղաքական-անվտանգային դիսկուրսում փոխկապակցված ձևով օրակարգ բերվեց բանալի բառերի նշանակության մի քանի հասկացություն՝ «Ազգային ուխտ-Լոզան-1923 թ.», որոնք ի ցույց են դնում Էրդողանի անվտանգային, աշխարհաքաղաքական պատկերացումները Թուրքիայի տեղի ու դերի մասին: Պաշտոնական, քաղաքական ու վերլուծական խոսույթի կարևոր թեմաներից մեկը դարձավ «Ազգային ուխտի» վերաարժևորման խնդիրը, ինչն ուղղակիորեն Էրդողանի կողմից կրկին բերվեց օրակարգ: Դրան զուգահեռ նա բարձրացրեց Լոզանի պայմանագրի վերանայման հարցադրումը, ինչը ևս պատահական չէր: Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիայի արևմտյան և հարավային սահմաններում «Ազգային ուխտով» հռչակված նպա-

---

[19] Cumhurbaşkanı Erdoğan "Doğu Akdeniz'de dayatılmaya çalışılan Sevr'e de boyun eğmeyeceğiz", https://www.sabah.com.tr/video/haber/son-dakika-cumhurbaskani-erdogan-dogu-akdenizde-dayatilmaya-calisilan-sevre-de-boyun-egmeyecegiz-video

[20] «Երկնագույն հայրենիքի»-(թուրք.՝ "Mavi vatan") գաղափարը Սև, Էգեյան, Մարմարա և Միջերկրական ծովերում Թուրքիայի՝ ծովային տարածքների նկատմամբ հավակնոտ քաղաքականությունը ձևավորող և ռազմական ուժի վրա հիմնված գերակայության հասնելու դոկտրինն է, որը Էրդողանական տարածաշրջանային քաղաքականության մեջ առանցքային նշանակություն է ձեռք բերել:

[21] Տե՛ս Emekli Tümamiral Gürdeniz: Türkiye'nin denizde bu kadar güçlü olacağını beklemiyorlardı, https://www.aa.com.tr/tr/turkiye/emekli-tumamiral-gurdeniz-turkiyenin-denizde-bu-kadar-guclu-olacagini-beklemiyorlardi/1953617

[22] «Ազգային ուխտը» (թուրք.՝ Misak-ı Milli) ընդունվել է 1920 թ. հունվարի 28-ին օսմանյան խորհրդարանի պատգամավորների կողմից և համարվում է քեմալական ազգայնամոլական շարժման քաղաքական հռչակագիրը, որը սահմանում է Թուրքիային պատկանող տարածքները և սահմանները: Այն ծավալապաշտական փաստաթուղթ է, որը Թուրքիայի սահմաններում է ներառում Արևմտյան Թրակիան, Կիպրոսը, Էգեյան կղզիները, նախկին Մոսուլի և Հալեպի վիլայեթները և այլն: «Ազգային ուխտի» սահմաններին վերաբերող տարբեր քարտեզներում Թուրքիայի կազմի մեջ են ներառված նաև Աջարիան, Նախիջևանը:

տակները «ցավալիորեն» չեն իրագործվել, 20 մլն քառակուսի կմ-ից Թուրքիայի տարածքը կրճատվել է՝ հասնելով 780 հազ.-ի, և իրենք 2016 թ. չեն առաջնորդվելու 1923 թ. հոգեբանությամբ[23]:

2016 թ. նոյեմբերին Թուրքիայի ազգային անվտանգության նոր հայեցակարգին նվիրված համաժողովում Էրդողանը նշեց. «Երբ մեր ժողովուրդը սկսեց անկախության պատերազմը, նրանք նպատակ սահմանեցին, դա «Ազգային ուխտն» է: Մենք գնահատում և ողջունում ենք այն բոլոր ձեռքբերումները, որ ունեցանք Լոզանի պայմանագրով, սակայն դա ետ չի պահում մեզ բարձրաձայնելու «Ազգային ուխտի» մեջ առնված մեր իրավունքները: Լոզանի պայմանագիրը անվիճարկելի և ոչ մի կերպ սուրբ փաստաթուղթ չէ: Մենք վստահաբար կքննարկենք դա և կձգտենք հասնել ավելիին»[24]: Իսկ 2017 թ. նոյեմբերին հայտարարեց, որ քեմալական շարժման սկզբում հռչակված «Ազգային ուխտին» նախկինում չեն կարողացել տեր կանգնել, իսկ ներկայումս Իրաքում և Սիրիայում տեղի ունեցող զարգացումների պատճառով ստիպված են տեր կանգնել դրան: Ըստ նրա՝ Սիրիայում, մասնավորապես Իդլիբում և Աֆրինում թուրքական ուժերի գործողությունները «Ազգային ուխտի» տրամաբանության շրջանակում են[25]: «Հյուրիեթ» պարբերականի սյունակագիր Ն. Շեները Արևելյան Միջերկրականում Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունն արդարացնում է «ծովերում Սևրի նախագծի» գործադրմամբ՝ դրան և «եվրոպական իմպերիալիզմին» որպես թուրքական հակաքայլ առաջարկելով «ծովային Ազգային ուխտի» գաղափարը: «100 տարի առաջ անվերադարձ պատմության աղբաման նետվեց Սևրի պայմանագիրը, սակայն հասկանում ենք, որ այն դեռևս եվրոպացիների ուղեղում է: Եթե ինչ-որ մի տեղ հնչում է «Սևր» բառը, ապա թուրքի գլխում «Ազգային ուխտ», «ազատագրական պատերազմ», «Լոզան» բառերն են հայտնվում»[26]:

Որոշ մասնագետներ նկատում են, որ թուրքական պատմագրությունը փառաբանել է Մ. Քեմալին՝ «Ազգային ուխտով» նախանշված հիմնական տարածքները թուրքական պետության կազմի մեջ ներառելու համար, բացառությամբ՝ Սիրիայի և Իրաքի հյուսիսային շրջանների[27]: Էրդողանը, սակայն, ներկայացնում է դրա այլընտրանքային պատմությունը, ըստ որի՝ Լոզանի պայմանագիրը ստորագրելը ոչ թե պրագմատիկ քայլ էր, այլ դավաճանություն, երբ դրանով հրաժարվե-

---

[23] Տե՛ս Cumhurbaşkanı Erdoğan'dan 'Misak-ı Milli' mesajı, http://www.hurriyet.com.tr/gundem/cumhurbaskani-erdogandan-misak-i-milli-mesaji-40252990

[24] “Nothing Can Stop a Nation That Does Not Fear Death”, https://www.tccb.gov.tr/en/news/542/61094/nothing-can-stop-a-nation-that-does-not-fear-death

[25] Տե՛ս Erdoğan: İdlib'de Afrin'de yapılan Misakı Milli'dir, https://www.gazeteduvar.com.tr/politika/2017/11/10/erdogan-milletin-mustafaya-sorunu-yok/

[26] Nedim Şener, Denizlerimizdeki Misak-ı Milli: Mavi Vatan, https://www.hurriyet.com.tr/yazarlar/nedim-sener/denizlerimizdeki-misak-i-milli-mavi-vatan-41595627

[27] Տե՛ս **Paul Antonopoulos**, Turkey’s interests in the Syrian war: from neo-Ottomanism to counterinsurgency, Global Affairs, Vol.3, Issue 4-5, 2017, էջ 411:

ցին սիրիական ու իրաքյան տարածքներից, ինչպես նաև Էգեյան կղզիներից[28]: Այդ պատճառով է, որ «Էրդողանը շարունակաբար ետ է դառնում դեպի «Ազգային ուխտը»: Ըստ Էրդողանի՝ պետական և հայրենասեր լավ գործիչը պետք է շատ տարածքներ կցեր նորաստեղծ պետությանը՝ չնայած պատմական ու ժողովրդագրական իրողություններին: «Ազգային ուխտի» վերակենդանացումը թուրքական իշխանությունների շրջանում ավելի շուտ իռեդենտիզմի վկայություն է, քան զուտ նախկին ռեժիմներին ուղղված հանդիմանություն[29]:

Սրանք ներկայիս Թուրքիայի պարադոքսի դրսևորումներն են: Երբ մի կողմից ակտիվորեն շրջանառվում է «Սևրի սինդրոմը», Թուրքիայի՝ վտանգի մեջ լինելու և մասնատման հանգամանքը, մյուս կողմից՝ ոչ միայն խոսույթի մակարդակում, այլև արտաքին ու անվտանգային քաղաքականության մեջ իրականացվում են ռևիզիոնիստական, ագրեսիվ ու ծավալապաշտական գործողություններ: Այս համատեքստում 2020 թ. օգոստոսին ուշագրավ հրապարակմամբ հանդես եկավ ֆրանսիական «Լը Մոնդ» պարբերականը, ըստ որի՝ Արևելյան Միջերկրականում իր հավակնոտ քաղաքականությամբ Էրդողանը մեկ դար անց վրեժ է լուծում Սևրի պայմանագրից[30]: Թուրքական իշխանամետ «Յենի շաֆաք» թերթի սյունակագիր, էրդողանական քարոզչամեքենայի ակտիվ հրապարակախոսներից Իբրահիմ Քարագյուլը թեմայի առնչությամբ նկատում է. «100 տարի առաջ Օսմանյան կայսրությունը մասնատող երկրներից մեկը՝ Ֆրանսիան, հիմա բոլոր ճակատներում տանուլ է տալիս Թուրքիային, ինչը ցուցիչն է այն բանի, թե որքան է փոխվել ուժային քարտեզն այժմ»: Ըստ նրա՝ «արևմտյան մամուլի ու քաղաքական էլիտաների կողմից Թուրքիայի «մեծ քայլարշավի» դեմ 100 տարի առաջվա ընկալումները, հաշվեհարդարի հայտարարությունները սխալ չեն..., սակայն Թուրքիայի քաղաքական միտքը փակում է 100 տարի առաջվա փակագծերը... Սևրը իրենց շուրթերից տարիներով չհեռացնողներից այժմ ծպտուն չի լսվում»[31]: Անվտանգության նոր հայեցակարգի ու որդեգրած տեսլականի շրջանակում վերոնշյալ մոտեցումներին վերաբերող շեշտադրումներով հանդես եկավ Թուրքիայի նախագահի մամուլի խոսնակ Իբրահիմ Քալընը՝ լրացնելով «Ազգային ուխտի» վերաբերյալ նախկինում Էրդողանի բացած դիսկուրսը: 2019 թ. դեկտեմբերին, խոսելով Սիրիա և Իրաք թուրքական ռազմական ներխուժումների, Լիբիա ռազմական ուժեր ուղարկելու մտադ-

---

[28] Տե՛ս **Nick Danforth**, Turkey's New Maps Are Reclaiming the Ottoman Empire, Foreign Policy, October 23, 2016, https://foreignpolicy.com/2016/10/23/turkeys-religious-nationalists-want-ottoman-borders-iraq-erdogan/**:**

[29] Տե՛ս **Paul Antonopoulos**, նշվ. աշխ., էջ 411:

[30] Տե՛ս Fransız Le Monde gazetesi: Erdoğan, Sevr'den intikamını alıyor, https://www.yenisafak.com/dunya/fransiz-le-monde-gazetesi-erdogan-sevrden-intikamini-aliyor-3551611

[31] "Sevr'in rövanşı" ne demek?, https://www.yenisafak.com/yazarlar/ibrahimkaragul/sevrin-rovansi-ne-demek-biz-hangi-cumleleri-kuralim-dun-imparatorluk-parcalayan-fransa-turkiyeye-nasil-yenildi-islam-orta-kusakta-derin-izler-birakiyoruz-bu-yuke-omuz-verelim-2055864

րությունների մասին, վերջինս հայտարարեց, որ գլոբալացման ժամանակաշրջանում «Ազգային ուխտի» սահմանների անվտանգությունն սկսվում է այդ սահմաններից անդին. «Այսինքն՝ Թուրքիայի անվտանգությունն սկսվում է «Ազգային ուխտի» սահմաններից հեռու: Ստիպված ենք անվտանգության շրջագիծը շատ ավելի լայն տարածքի վրա գծել»[32]: Անվտանգության նման ընկալումն ու քաղաքականությունը նոր երևույթ է թուրքական ռազմավարական մտածողության մեջ, ինչը հատուկ չի եղել նախկին վարչակարգերին ու զինվորականությանը: Նման տեսլականն ու դրա իրականացումը բխում է Թուրքիայի՝ համապատասխան ռազմական ներուժի տիրապետելու, ռազմական ինքնավստահության աստիճանից և էլիտայի հավակնոտ, գերինքնավստահ վարքագծից:

Թուրքիան այսօր մի շարք ուղղություններով ընկղմված է պատերազմական գործողություններում և ագրեսիվ աշխարհաքաղաքական մրցակցությունում՝ հատկապես Արևելյան Միջերկրականում գերակայության հասնելու նպատակով: Վ. Չեթերյանի դիպուկ բնորոշմամբ՝ Անկարայի «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը վերածվել է «Երկնագույն հայրենիքի» ծավալապաշտական ռազմավարության, և քեմալական հայտնի՝ «Խաղաղություն երկրում, խաղաղություն աշխարհում» կարգախոսը արդեն «Պատերազմ երկրում, պատերազմ աշխարհում» կարգախոսի վերափոխելու ժամանակն է[33]:

Սիրիայից, Լիբիայից, Արևելյան միջերկրածովյան տարածաշրջանից հետո Թուրքիայի ներգրավվածությամբ իրավիճակի ապակայունացման ու ռազմական գործողությունների հերթական ուղղություն դարձավ Հարավային Կովկասը: 2020 թ. սեպտեմբերի 27-ին ադրբեջանական զինված ուժերը լայնամասշտաբ հարձակում ձեռնարկեցին Արցախի դեմ: Թուրքիան ոչ միայն քաղաքական, այլև ռազմական լուրջ դերակատարություն ունեցավ ռազմական գործողություններում՝ դրանց ուղղակի պլանավորումից ու ղեկավարումից մինչև նյութատեխնիկական մատակարարում[34]: Ավելին՝ Թուրքիան ակտիվորեն ներգրավեց նաև իր հովանավորության տակ գտնվող սիրիական խմբավորումների վարձկան-զինյալներին[35], ինչը հաստատվեց տար-

---

[32] Kalın: Misak-ı Milli sınırlarının güvenliği sınırların ötesinde başlar, http://www. hurriyet. com.tr/gundem/kalin-misak-i-milli-sinirlarinin-guvenligi-sinirlarin-otesinde-baslar-41408298

[33] Տե՛ս Vicken Cheteryan, From “Zero Problem” to “Blue Homeland”: Turkey's intervenetionnist policy, http://www.agos.com.tr/en/article/24509/from-zero-problem-to-blue-homeland-turkey-s-interven tionist-policy?fbclid=IwAR1sBm7lPY9fGNTrNq5vNUeur21zeXaajIjcHVS_-1W4doGT3CgZGyZHmo:

[34] Տե՛ս «Кто из турецких генералов руководил атакой на Карабах» // «Взгляд», 12 ноября 2020; ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Ադրբեջանի ԶՈՒ կողմից Արցախի Հանրապետության քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման վերաբերյալ, https://www. mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/02/mfa_statement_/10485

[35] Տե՛ս ՀՀ ԱԳ նախարարությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տարածաշրջան օտարերկրյա զինյալ ահաբեկիչների տեղակայման վերաբերյալ, https://www.mfa.am/hy/press-releases/2020/11/01/fm-statement/10622

բեր պետությունների ու կազմակերպությունների կողմից: Թուրքական կողմը Արցախի դեմ պատերազմում կիրառեց վերջին տարիներին Իրաքում, Սիրիայում և Լիբիայում իր ռազմաքաղաքական նպատակների իրականացման գործում լուրջ ռեսուրս դարձած ջիհադական զինյալ խմբավորումներին՝ պրոքսի պատերազմի իր փորձառությունը կիրառելով նաև Արցախի դեմ պատերազմում:

Արդյունքում՝ Թուրքիան ոչ միայն ապահովեց ադրբեջանական կողմի հաջողությունները, այլ նաև ունեցավ Հարավային Կովկասում ռազմաքաղաքական ազդեցության էական մեծացում: Հարավային Կովկասը դարձավ Էրդողանի ագրեսիվ ու ծավալապաշտական հավակնությունների հերթական թատերաբեմը՝ կյանքի կոչելով 2015 թ. իր այն հայտարարությունը, որ «եթե Թուրքիան 1990-ականների սկզբներին ներկայիս պես հզոր լիներ, Լեռնային Ղարաբաղում պատերազմ չէր լինի», այսինքն՝ թույլ չէր տրվի ադրբեջանական կողմի պարտությունը[36]:

Ակնհայտ է, որ Թուրքիայի կառավարող շրջանակները նախագահ Էրդողանի գլխավորությամբ կրկին սրում են թուրքական հասարակությունում առկա տարածքային մասնատման ու Թուրքիայի դեմ արտաքին ուժերի կողմից իրականացվող «դավադիր գործողությունների» շարունակական վախի ընկալումները, որոնք ուժգնացել են հատկապես ԵՄ-ի ու ԱՄՆ-ի հետ լարված հարաբերությունների համապատկերում: Մյուս կողմից՝ Թուրքիայի ագրեսիվ, ռազմատենչ տարածաշրջանային քաղաքականությունը հիմնավորվում է նաև այդ վախի ու սինդրոմի միջոցով՝ փաստարկելով, որ «դավադրությունների» կանխարգելման միակ ու լավագույն միջոցը նախահարձակ գործողություններն են՝ թույլ չտալու անցյալի դառը փորձառությունը, որի հիմքում Սևրն ու դրա հիշողությունն առանցքային դեր են խաղում: Թուրքիան այսօր որդեգրել է հարևան տարածաշրջաններում ծավալապաշտական ու ռևիզիոնիստական քաղաքականություն, ինչն էական հարված է հասցնում տարածաշրջանային ու միջազգային կայունությանը և անվտանգությանը՝ դառնալով սպառնալիք ոչ միայն հարևան երկրների, այլ նաև միջազգային դերակատարների համար: Աշխարհաքաղաքական նոր ինքնությունն ու պատկերացումները դնում են ոչ միայն ազգային շահի վերաձևակերպման պահանջ՝ արտաքին ու անվտանգային քաղաքականության նոր հրամայականներով, այլ նաև ձևակերպում ռևիզիոնիստական աշխարհաքաղաքականության նոր մոտեցում իր հարևան տարածաշրջաններում:

Բանալի բառեր – *Թուրքիա, «Սևրի սինդրոմ», «Ազգային ուխտ», «Արդարություն և զարգացում» կուսակցություն, անվտանգություն, խոսույթ*

---

[36] Տես **Լ. Հովսեփյան**, Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները, «Հայկական բանակ», թիվ 4, 2018, էջ 46:

ЛЕВОН ОВСЕПЯН – ***Две парадигмы современного турецкого политического дискурса и дискурса безопасности: «севрский синдром» и «национальный обет». От дискурса к политике***. – В современном официальном дискурсе Турции активно проявляется «севрский синдром» – страх территориальных потерь, навязываемых ей извне. Вместе с тем турецкие власти придерживаются в отношении соседних стран крайне агрессивной ревизионистской политики, основанной на применении силы и постоянной её угрозе; при этом на уровне дискурса выдвигается призрак «национального обета». В риторике властей совмещаются, с одной стороны, страх раздела Турции, с другой стороны, в качестве противодействия – экспансионистская политика в регионе, очевидная не только на уровне дискурса, но и в конкретных военно-политических действиях. «Севрский синдром» влиял в прошлом и влияет ныне на турецкую политику, поскольку он воздействует на восприятие политической реальности и международных процессов.

Ключевые слова: *Турция, «Севрский синдром», «Национальный обет», Партия «Справедливости и развития», безопасность, дискурс*

LEVON HOVSEPYAN – ***Two Paradigms of the Modern Turkish Political-Security Discourse – the Sèvres Syndrome and the National Oath: from Discourse to Policy***. – The Sèvres syndrome, the fear of territorial loss being imposed on Turkey by foreign powers, again gains its active manifestation in modern Turkish official and political discourse. In parallel, Turkish authorities have taken aggressive and revisionist policy course in the neighbouring regions, based on the use of military force and continuous threat of it, bringing into agenda the territorial vision of the National oath. In the rhetorics of the authorities are combined the fear of territorial loss, the syndrome, on the other side as the countermeasure to it, aggressive and interventionist policy in neighboring regions, which is obviously not only in discoursive dimension but also in real military-political actions. So we can say that the current aggressive regional policy of Turkey is determined by the fear of territorial dismemberment of Turkey. The Sèvres syndrome, as in the past, today also influences Turkish politics and the understanding of politics and world affairs.

Key words: *Turkey, "Sèvres syndrome»", "National Oath", "Justice and Development" Party, Security, Discourse*

Ներկայացվել է՝ 21.10.2020, Գրախոսվել է՝ 03.11.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020